ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՏԱՇԷՆՑԻՆԵՐԻՆ

Հայ առաքելական եկեղեցու Իրանի հարաւային թեմի առաջնորդ Կորիւն արքեպիսկոպոս Պապեանը եւ իրեն ընկերակցող ազգայիններ պրնք. Թաքուլ Օհանեանը եւ Հրայր Շահնազարեանը, որոնք պաշտօնական այցելութեամբ Հայաստանում են գտնւում, ուրբաթ Մայիսի 24ին Ծաղկաձորի «Նարեկ» հիւրանոցում հանդիպեցին Գետաշէնից տեղահանուած հայերին։ Առաջնորդ Սրբազանը գնահատեց գետաշէնցիների եւ մարտունաշէնցիների ցուցաբերած հերոսական դիմադրութիւնը խորհրդային բանակի եւ ՕՄՕՆականների դէմ, յիշեց քաջաբար զոհուած հայ ֆեդայիներին եւ վերջում իր ղեկավարած թեմի հայութեան անունից տեղահանուած գիւղացիների խորհրդին յանձնեց 35200 ռուբլի դրամ, այդտեղ պատսպարուած 352 զաղթականներին հարիւրական ռուբլի նուիրելու համար։ Յուզիչ մթնոլորտում արտայայտուեցին նաեւ թեմի պատգամաւորական ժողովի ատենապետ Թ. Օհանեանը եւ թեմական խորհրդի ատենապետ Հ. Շահնազարեանը, որոնք բացատրեցին արտերկրի հայութեան ապրումներն ու տարած աշխատանքները՝ կապուած Արցախի հարցի պաշտպանութեանը։ Շնորհակալական խօսքով հանդէս եկան գիւղացիութեան ներկայացուցիչները։

Հարաւային իրանահայութեան թեմի պատուիրակութիւնը Վազգէն Ա. կաթողիկոսի հրաւէրով Մայիսի 10ից ի վեր գտնւում է Ս. Էջմիածնում։